ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 05 » 12 2017թ. № 1192-Ա

«ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել «Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին սույն հրամանի հավելվածում նշված ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:

2. «Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել 1 տարի 6 ամիս ժամկետով՝ մինչև 2019 թվականի մայիսի 20-ը, տրամադրել Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ Ն-19 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-19(Հ-19)2017:

3. «Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2017թ.
---------- ի N ----Ա հրամանի

ՑԱՆԿ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
2. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
3. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
4. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
5. «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
6. «Ցորենի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
7. «Գազանման վառելիքով աշխատող սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 016/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
8. «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 017/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
9. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
10. «Անձնական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 019/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

11. «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

12. «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

13. «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

14. «Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութերի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

15. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

16. «Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

17. «Բարձր ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 032/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

18. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

19. «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ